2.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

*Ուսումնական տարվա ընթացքում իրականացնել անձի համակողմանի և ներդաշնակ դաստիարակություն

*Կիրառել արդյունավետ մեթոդներ դասերը ժամանակին և արդյունավետ պատրաստելու համար

*Կանխել սովորողների բացակայություններն ու ուշացումները

*Հետևել սովորողների ֆիզիկական և մտավոր առողջության պահպանմանը

*Հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջընթացին

*Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ

*Մեծ ուշադրություն դարձնել դասագրքերի պահպանմանը

*Կատարել դասալսումներ այլ առարկաներից

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1ՀՈԳԵՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-Ընդլայնել ճանաչողական մտահորիզոնը.հղկել խոսքը,հստակեցնել բառապաշարը:Ծանոթացնել մանկական Աստվածաշնչին,կարդալ և վերլուծել հատվածներ:

Ծանոթացնել հայ եկեղեցական տոներին,խոսել դանց ծագման և խորհրդի մասին:

3.2 ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-Երեխաներին սովորեցնել շրջակա աշխարհի մեջ տեսնելու հոգևոր հարստություն,բարություն,արմատավորել գեղեցիկը:Դիտել ֆիլմեր,այցելել թանգարաններ:

3.3 ՌԱԶՄԱ_ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի,ակնածանք՝ֆիդայիների և հայ ազատամարտիկների նկատմամբ:Զրույցներ անցկացնել<<Պատերազմ և խաղաղություն>>,<<ՀՀ հիմնը>>,<<ՀՀ զինանշանը>>,<<Մեր հայրենիք>>,<<ՀՀ դրոշը>> թեմաներով:

3.4 ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-Կազմակերպել շարժախաղեր ամբողջ դասարանի համար,թիմային խաղեր:Զրույցներ անցկացնել<<Իմ վերաբերմունքն իմ առողջությանը>>թեմայի շուրջ:Մշակել աշակերտների շարժողական հատկությունները:Գրել ակնարկներ սպորտային չեմպիոնների մասին:

3.5 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-Հասնել դրան,որ երեխան կարողանա ինքնահաստատավել և դրա միջոցով մտերմանա մեծահասակների հետ,համագործակցի,ձեռք բերի կյանքի հմտություններ:Կազմակերպել հանրօգուտ աշխատանքներ՝դասարանի մաքրության պահպանություն,,կահավորում:Դպրոցամերձ տարածքների մաքրում:

3.6 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-Լուսանկարների,նկարների ցուցահանդես<<Սիրի՛ր,ճանաչի՛ր և պահպանի՛ր հայրենի բնությունը>>թեմայով:Կազմակերպել

էքսկուրսիաներ բնության գրկում:Բույսերի,ծառերի խնամքին վերաբերվող գրականության հետ ծանոթացում և քննարկում:

4.ԴՊՐՈՑ_ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ-Անցկացնել ծնողական ժողովներ,զրույցներ,այցելություններ:Հատկապես դժվար դաստիարակվող սովորողների ծնողների հետ լինել մշտական կապի մեջ:Ամբողջ ուստարում պահպանել դպրոց-ծնող,ուսուցիչ-ընտանիք կապը:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1-ին շաբաթ-Քննարկել նոր ուսումնական տարվա հետ կապված հարցերը:Օգնություն գրադարանավարին

2-րդ շաբաթ-Զրույց՝ համաճարակային իրավիճակի մասին

3-րդ շաբաթ-Ես ունեմ նոր ընկերներ

4-րդ շաբաթ-Առողջ ապրելակերպ:Հանդիպում բուժքրոջ հետ

5-րդ շաբաթ-Ուսուցչի օր:Բացիկների պատրաստում

6-րդ շաբաթ-Զրույց՝<<Դպրոցը մեր տունն է,իսկ ունեցվածքը մեր սեփականությունն է>>թեմայով

7-րդ շաբաթ-Զրույց՝<<Գույնզգույն աշուն>>թեմայի շուրջ:Փոքրիկ ցուցահանդես՝նվիրված աշնանը

8-րդ շաբաթ-Աշունն իմ դասարանում և դպրոցի բակում

9-րդ շաբաթ-Զրույց՝<<Երթևեկության կանոնները>>թեմայի շուրջ

10-րդ շաբաթ-Կավճագրություն,,Ես իրավունք ունեմ/առցանց դասաժամ

11-րդ շաբաթ-Զրույց՝<<Իմ իրավունքներն ու պարտականությունները>>թեմայով

12-րդ շաբաթ-Քննարկումներ<<Գիրք, թե համակարգիչ>> թեմայի շուրջ

13-րդ շաբաթ-Ճիշտ սննդակարգ

14-րդ շաբաթ-Զրույց՝<<Իմ հետաքրքրություններն ու նախասիրությունները>>թեմայով

15-րդ շաբաթ-Կազմակերպել ամանօրյա միջոցառում

16-րդ շաբաթ-Լավ և վատ սովորույթներ

17-րդ շաբաթ-Ինչպես լինել ազնիվ

18-րդ շաբաթ-Ում կուզեի նմանվել

19-րդ շաբաթ-Զրույց-քննարկում հայոց բանակի պատմության,կազմավորման,կարևորության մասին:

20-րդ շաբաթ-Զրույց՝<<Իմ օգնականը>>թեմայով:Պարզաբանենք,թե ովքեր են օգնում երեխաներին իրենց խորհուրդներով

21-րդ շաբաթ-Գրքի տոնին նվիրված զրույցներ

22-րդ շաբաթ-Զրույց՝<<Գարունը Հայաստանում>>խորագրով:Փոքրիկ ցուցահանդես՝<<Բնության զարդը>>

23-րդ շաբաթ-Ծաղկատունկի կազմակերպում դպրոցում և դպրոցի բակում

24-րդ շաբաթ-Նախապատրաստել դաս-միջոցառում՝նվիրված մայրության տոնին

25-րդ շաբաթ-Ծնողական ժողով աշակերտների մասնակցությամբ

26-րդ շաբաթ-Զրույց՝<<Իմ սիրելի կենդանին>>թեմայի շուրջ

27-րդ շաբաթ-Մրցույթ՝<<Այն ո՞վ է խախտել կանոնը>> թեմայով

28-րդ շաբաթ-<<Հազուստն ու իմ առողջությունը>>թեմայի շուրջ զրույց-քննարկում

29-րդ շաբաթ-Զրույց՝<<Անձնական հիգիենա>>

30-րդ շաբաթ- Մուլտֆիլմի դիտում և քննարկում

31-րդ շաբաթ-Զրույց մայիսյան տոների մասին

32-րդ շաբաթ-Էքսկուրսիա բնության գրկում